

պատկերով մը զայն փոխանակել սկսեր և այսպէս այլևս տարածուած սովորութեան մը առիթ ընծայած ենք:

Մեր կարծիքով սակայն, ըլլայ վարագոյրի վրայ նկարուած, ըլլայ ուրոյն խաչելութեան պատկեր մը վարագոյրին առջև դրուած, ապաշխարութեան ունէ զիտոււմ չի տկարացներ, վասնզի Աւագ սեղանին պատկերը Աստուածածնի պատկերն է և ի տես դրուած խաչելութեան պատկերը քրիստոնէական ուրիշ խորհուրդ կը ցուայնէ, ինչպէս բացատրեցինք վերև. և հայ եկեղեցին զարեւէ ի վեր ընդունած և կիրարկած է զայն:

Որչափ որ՝ ոմանց կողմէն՝ Զենոբ Գըլափի պատմութիւնը և Ազաթանգեղոսը յետին դարուց գործեր նկատուին, բայց դարձեալ անոնք իրենց մէջ կը կրեն շաշոյց քրիստոնէութեան ծագման բարձր հրեոթիւն մը և մանրամասնութիւններ կը պարունակեն Ս. Լուսաւորչի քարոզութեան և շաշոյց նոխնական քրիստոնէական կեանքին վերաբերութեամբ. նոյն պատմիչներէն առաջինն է որ կը յիշէ թէ Ս. Գրիգոր և Ս. Տրդատ յազթական խաչեր կանգնած էին Տարսնի բարձր բլուրներու վրայ ի տես հաւատացիւց, իսկ հայերէն Ազաթանգեղոսը Ս. Լուսաւորչի բերանը կը գնէ (էջ 68) հետեւալ խօսքերը «... և փոխանակ զրոշելոյ փայտիցն, զիսաչ իւր կանգնեաց ի մէջ տիեզերաց, զի որով սովոր իցեն երկիրպագանել փայտի, սովորականաւ ընդելականաւն հաւատացեն երկիրպագանել խաչին փայտի, և որ ի վերայ լորս պսկերն և մարդայեան իցի, զի ի վերայ խաչին ասէր այսպէս ...»:

Այս խօսքերը ապացոյցներ են թէ Քըրիստոսի խաչելութեան պատկերը հինէն ի վեր գոյութիւն ունէր քրիստոնէից մէջ և ապա ծիսական պահանջով մը ներմուծուեցաւ եկեղեցեաց մէջ վերագոյն բացատրուած իմաստով զոր կը յայտնարեւէ շաշոյց տանկայց եկեղեցին Մեծ Պահոց մէջ խաչելութեան պատկերը գնելով ի տես հայ հաւատացիւց:

Մ. Ե. Ա.

Վաղուց է ընթերցող մը Գազայէն (Տիար Վ. Աբահամեան) հարցուցած եր մեզի քե ի՛նչ արբերութիւն կայ շայ Առաքելական, Բողոքական եւ Կաթոլիկ եկեղեցիներու միջև: Ասոնք ի՛նչ կը դաւանին իրարմէ արբեր, ո՛րք միւսին մօտ է, եւ ասոնց բաժանումներ ե՛րբ եղած են:

Հարցումը շատնց եղած է քեւ, բայց վստահ ենք որ անիկա շատ մը հայ քրիստոնէաներու մտքին համար միտք խնդիր մը եղած է:

Գոհացուցիչ պատասխան մը մեծ գիրք մը գրելով միայն կարելի է տալ. բայց երկար առ այժմ յետաձգելով՝ կարճ ի կարճոյ աչափն քննիք:

Շաշոյց. Առաքելական եկեղեցին կ'ընդունի միայն Տիեզերական առաջին ժողովները, գումարուած 325-ին, 381-ին և 431-ին Ք. Ե., Տեսան մերոյ աստուածութիւնը ուրացողներու դէմ, Անոր մարդկութիւնը ուրացողներու դէմ, և Անոր մէջ երկու անձ դաւանողներու դէմ: Մեր եկեղեցին այս երեք ժողովներու դրածէն (որ մեր Հաւատամքին մէջ կ'ամփոփուի) աւելի բան քրիստոնէական փրկութեան համար անհրաժեշտ չնկատեր: Կաթոլիկները այս երեքէն յետոյ տակաւին բազմաթիւ ժողովներ կ'ընդունին և անոնց որոշումները պարտադիր և անհրաժեշտ կը նկատեն: Բողոքականները բնաւ ժողով չեն ընդունիր. ամէն մարդ ազատ է իր ուզածին պէս մեկնելու Ս. Գրքը, և ոչինչ ունին մեր Հաւատամքին համապատասխանող, և, հակառակ մեզի և Կաթոլիկներուն՝ Տէր Յիսուսէն ի վեր սերունդէ սերունդ եկած ասանդութիւնը կարեոր չեն նկատեր:

Շաշոյց եկեղեցին կ'ընդունի թէ բոլոր հին եկեղեցիները (Հոռոմէական, Յայն, Ասորի, Հապէշ և այլն) ճշմարիտ և լինդհանրական եկեղեցի մաս կը կազմեն, միայն թէ անոնք առաւել կամ պակաս սխալ գաղափարներ և սովորութիւններ ունին: Կ'ընդունի թէ միութեան կապը էական բաներու ընդունելութեան մէջ է (Հանդանակ, Խորհուրդներ և այլն). իսկ ամէն ազգ կրնայ իր կրօնական պետն ունենալ և անոր հնազանդիլ: Կաթոլիկը՝ ո՛վ որ Պապին չհնազանդիր և հոռոմէական եկեղեցիի

ընդունածները չընդունիր՝ ճշմարիտ եկեղեցիի մաս չկազմեր, կ'ըսէ: Իսկ Բողոքականները որոնք բազմապիսակ են, արդէն բառին բուն իմաստով եկեղեցի չունին. «անտեսանելի եկեղեցի»ի տեսութիւն մը ունին: Անոնց մէջ մարդ ինքն իրեն կը հնազանդի. իրարու քով կուզան պարզապէս միատեղ ազօթելու, զիրար լսելու և Ս. Գիրք կարդալու համար:

Հայոց եկեղեցիի և Կաթողիկոսներու միջև վարդապետական և արարողական տարբերութիւններ բաւական կան (օր. Հաղորդութեան մասին՝ Գոյացախոտըխներ, Ս. Երրորդութեան մասին՝ և յորդոյն, Հանդերձեալ կեանքի մասին քառասունը ևն): Բայց անոնք վերը մեր գրած սկզբունքին հետեանքներն ու մանրամասնութիւններն են: Իսկ բողոքականները բան մը չունին բազդատելիք: Ս. Գիրքը իւրաքանչիւր անհատի համար ամէն բան է. և մենք զիտենք թէ Ս. Գիրքը շիտակ հասկնալ և անկէ որոշ կանոններ հանել որքան դժուար է՝ մա՛նուանց անոնց համար որ ժամանակ չեն ունենար զայն սերտելու:

Հայոց եկեղեցիին ամէնէն մօտ եկեղեցիներն են դուանութեան տեսակէտէ՝ Ասորի, Ղպտի և Հապէշ եկեղեցիները. յետոյ կարգաւ Յոյն եկեղեցին, Հռոմէական եկեղեցին, Եպիսկոպոսականը. Իսկ Բողոքականը եկեղեցի չէ ըսինք արդէն: Եպիսկոպոսական եկեղեցիին մէկ մասը մեզի աւելի մօտ է. բայց մէկ մասն ալ հետու է՝ բողոքականութեան շատ միտած ըլլալով:

Հայց. եկեղեցին ազատական է և լայնամիտ. բայց այս ըսել չէ թէ սկզբունք չունի. ըստ այսմ՝ կը մերժէ ուրիշ եկեղեցիներու ինչ ինչ սխալները կամ մտաբութիւնները, զորս թէև էական փրկութեան արգելք չի նկատեր՝ բայց կը պնդէ ուղղադոյնին վրայ՝ որ աւելի հաճելի և ընդունելի է Աստուծոյ:

Այս նիւթի մասին Յրմանեանի Հայոց եկեղեցիի գիրքը պէտք է կարդալ: Աւրիշ գիրքեր ալ կան՝ բայց հաղուապիւտ են:

S. Վ. Ն.

ԸՆԹԵՐՅՈՂԷՆ՝ ԱՌ ԽՄԲԱԳԻՐՆ

Սրբազան Տէր Խմբագիր,

Մեծ հաճոյքով կը կարգամ ՍԻՈՆը, ու չազրուածեամբ հետեւած եմ Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ յօդուածներուն. շատ ճիշդ է անոնց եզրակացութիւնը: Երբ ժողովուրդը և եկեղեցականը կրօնապէս դաստիարակուած է և հասունցած՝ եկեղեցին ինքնին բարեկարգուած է: Այս ալ Ս. Գիրքին ընդհանրացումով և կարգալով կարելի կ'ըլլայ:

Ս. Գիրքին աշխարհաբար հայերէնով հրատարակութիւնը անհրաժեշտութիւն մ'է այսօրուան պէտքին համար: Այս գործը զլուխ հանելու համար մեծ բարեբար մը փնտուել թէ՛ կարելի չէ և թէ շիտակ չէ: Ազգին ողջմիտ մասն է որ պէտք է հոգայ այս կարևոր պէտքը. շատ նպատակաշարժար պիտի ըլլար խմբակցութիւն մը կազմել այս նպատակին համար 5 կամ 10 տարուան բաժանորդագրութեան ձևով, եթէ արգելք մը չկայ նոյն իսկ Հ. Բ. Ը. Ս. հովանիին տակ, և այս կարևոր պահասը զլուխ հանել: Այս Ազգը որ ժամանակաւոր (անցնող) պէտքերու համար միշտ կուտայ, ևս վստահ եմ թէ այս տեսակ դարեր տեսիլք գործի մը համար երբեք չխնայիր:

Սրբազան Հայր, ներկայովս կը խոստանամ սոյն նպատակին համար կազմուելիք ընկերութեան տարեկան (5) հինգ անգղ. ոսկի վճարել 5 կամ 10 տարի, որչափ ժամանակ որ հարկաւոր է: Շատ փոքրաթիւ գաղութի մը մէջ գանուելով հնարաւորութիւն չունիմ ինձի ընկերներ զընելով զլուխ կենալու այդ գործին: Հայաշատ կեդրոններու մէջ կը յուսամ թէ զընուելին մարդիկ, որոնք այս շատ կարևոր գործը զլուխ հանելու համար սիրով յանձնատու ըլլան: . . .

Համբուրելով Ս. Աջերնիդ
Թ. ՄԱՐՄԱՆԵԱՆ

Միլանո

